# Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՅՑԸ ՖԻՆԼԱՆԴԻԱ

(2–6 հունիսի 2004 թ.)

Սույն թվականի հունիսի 2-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Ֆինլանդիայի և Տուրկուի Արքեպիսկոպոս Յուկկա Պաարմայի հրավերով պատասխան այցով մեկնեց Ֆինլանդիա: Ֆինլանդիայի Ավետարանական-Լութերական Եկեղեցու պաշտոնական պատվիրակությունը, գլխավորությամբ Ֆինլանդիայի և Տուրկուի Արքեպիսկոպոս Յուկկա Պաարմայի, Նորին Սրբության հյուրն էր երկու տարի առաջ:

Վեհափառ Հայրապետին ուղեկցող շքախմբի անդամներն էին Կենտրոնական Եվրոպայի Հայրապետական պատվիրակ Գերաշնորհ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Գրիգորյանը, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի պատասխանատու Գերաշնորհ Տ. Եզնիկ եպիսկոպոս Պետրոսյանը, Ռուսաստանի և Նոր Նախիջևանի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանը և Հոգեշնորհ Տ. Մեսրոպ աբեղա Պարսամյանը՝ որպես գավազանակիր:

Հելսինկիի Վանտաա օդանավակայանում Վեհափառ Հայրապետի գլխավորած պատվիրակությանը դիմավորելու էին եկել Հայաստանում Ֆինլանդիայի արտակարգ և լիազոր դեսպան Տիմո Լահելման, Ֆինլանդիայում Հայաստանի Հանրապետության դեսպան Վլադիմիր Կարմիրշալյանը, Ֆինլանդիայի Ավետարանական-Լութերական Եկեղեցու Միջազգային կապերի տնօրեն Հայր Դր. Ռիստո Կանտելը, Արքեպիսկոպոսի քարտուղար Հեյկկի Յասկելայնենը և այլոք:

Օդանավակայանից Վեհափառ Հայրապետը և իր շքախմբի անդամներն ուղևորվեցին հյուրանոց: Երեկոյան ժամը 20.00-ին ի պատիվ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տրվեց բարիգալստյան ընթրիք, որին ներկա էին Ֆինլանդիայի և Տուրկուի Արքեպիսկոպոս Յուկկա Պաարման, Հելսինկիի Մետրոպոլիտ Ամբրոսիոսը, Ֆինլանդիայի Էկումենիկ Խորհրդի գլխավոր քարտուղար Հայր Յան Էդստրոմը, Միջազգային կապերի տնօրեն Հայր Ռիստո Կանտելը, դեսպաններ Տիմո Լահելման և Հեյկի Տալվիտին, Հայր Վեիկո Պուրմոնենը և այլոք:

Հունիսի 3-ի առավոտյան Վեհափառ Հայրապետն իր շքախմբով այցելեց Ֆինլանդիայի Աստվածաշնչական Ընկերություն, ուր հանդիպում ունեցավ Ֆինլանդիայի Աստվածաշնչական Ընկերության նախագահ Իլկա եպիսկոպոս Կանտոլայի, գլխավոր քարտուղար Դոկտոր Մարկու Կոտիլայի և աշխատակիցների հետ:

Հետմիջօրեին Ամենայն Հայոց Կաթողիկոսն այցելեց Ուղղափառության և Արևելյան Եվրոպայի երկրների Եկեղեցիների ուսումնասիրությունների կենտրոն: Նորին Սրբությունը հանդիպումներ ունեցավ նաև Հելսինկիի և Յոենսուի համալսարանների աստվածաբանական ֆակուլտետների ուղղափառ և լյութերական դասախոսների և ուսանողության հետ, ծանոթացավ ֆակուլտետի գիտական կենտրոններում տարվող աշխատանքներին:

Վեհափառ Հայրապետի գլխավորած պատվիրակությունը երեկոյան ծանոթացավ մայրաքաղաքի տեսարժան վայրերին, այցելեց տարբեր եկեղեցիներ՝ Լութերական Տաճար, Վիմափոր եկեղեցի, Օտանիեմի մատուռ, Տապիոլայի եկեղեցի, եղավ նաև Այյասկայի՝ Հերմանի եկեղեցում:

Հունիսի 4-ին, ժամը 9.00-ին, տեղի ունեցավ առավոտյան համատեղ ժամերգություն, որին հաջորդեց մամլո ասուլիսը: Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հակիրճ ներկայացրեց Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու պատմությունը և այսօրվա առաքելությունը, ապա պատասխանեց լրագրողների հարցերին:

Ժամը 11.00-ին ճաշ տրվեց Ֆինլանդիայի Խորհրդարանի շենքում՝ հյուրընկալությամբ Խորհրդարանի փոխխոսնակ պրն Մարկու Կոսկիի: Այնուհետև Խորհրդարանի նախագահ պրն Սեպո Տիիտինեն ներկայացրեց Ֆինլանդիայի Խորհրդարանի գործունեությունը:

Հետմիջօրեին Նորին Սրբությանը ընդունեց նաև Ֆինլանդիայի վարչապետ պրն Մատի Վանհանենը: Գարեգին Բ Կաթողիկոսն անդրադարձավ դարասկզբին հայ՛ժողովրդի ապրած մեծ ողբերգությանը և իր ափսոսանքը հայտնեց, որ բոլոր երկրները չէ, որ պաշտոնապես դատապարտել են Հայոց ցեղասպանությունը, որը մարդկության դեմ գործված մեծագույն ոճրագործություններից մեկն է:

Այնուհետև Հայոց Հայրապետին և նրան ուղեկցող պատվիրակությանը հյուրընկալեցին նաև Ֆիննական Լութերական և Ուղղափառ Եկեղեցիների բարեսիրական կազմակերպությունները:

Նույն օրը, ժամը 18.00-ին, Հելսինկիի Ուսպենյան Տաճարում տեղի ունեցավ երեկոյան ժամերգություն:

Վեհափառ Հայրապետին դիմավորեց և ողջույնի խոսք ասաց Կարելիայի և Համայն Ֆինլանդիայի Արքեպիսկոպոս Լեոն: Պատասխան խոսքով հանդես եկավ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Երկրորդը:

## ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՈՒՍՊԵՆՅԱՆ ՏԱՃԱՐՈՒՄ

*«Այդպես և մենք, թվով շատ, մի մարմին ենք Քրիստոսով,*
*բայց յուրաքանչյուրս միմյանց անդամ ենք»:*
(Հռոմ. ԺԲ 5)

*Այս հավատով ու մխիթարությամբ, սիրելի եղբայրներ ու քույրեր, Մենք այսօր ողջունում ենք բոլորիդ և որպես Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Ամենայն Հայոց՝ բերում ձեզ օրհնություն Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու հոգևոր կենտրոն Մայր Աթոռ Ս. Էջմիածնից: Մենք փառաբանում ենք Աստծուն, որ շնորհեց Մեզ ուրախությունը Մեր հոգևոր եղբայր Ֆինլանդիայի Ուղղափառ Եկեղեցու առաջնորդ Գերաշնորհ Լեո Արքեպիսկոպոսի և իր հավատացյալ հոտի հետ այս պատմական տաճարում միասնաբար աղոթք բարձրացնելու երկինք՝ հայցելով*

*Տիրոջը ամուր և անսասան պահել Իր Սուրբ Եկեղեցին և շնորհել աշխարհին խաղաղություն և մարդկանց մեջ՝ հաճություն:*

*Եղբայրական սիրով ողջունում ենք քույր Եկեղեցիների, կրոնական կազմակերպությունների ներկայացուցիչներին և Ֆինլանդիայի կառավարության անդամներին: Ձեր ներկայությունն այստեղ վկայություն է Հայ Առաքելական Եկեղեցու, հայ ժողովրդի և Ֆինլանդիայում ապրող հայերի նկատմամբ Ձեր ունեցած հարգանքի ու գնահատության:*

*Հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում հայ համայնքի անդամներին, ովքեր Ֆինլանդիայի ազնիվ քաղաքացիներն են և նվիրվածությամբ ու հավատարմությամբ ծառայում են այս օրհնյալ երկրի առաջընթացին:*

*Ի Քրիստոս եղբայրներ և քույրեր, այս օրերին քրիստոնյաներս ապրում ենք Հոգեգալստյան խորհրդով, Քրիստոսի Եկեղեցու միասնության խորհրդով: Մի քանի օրից Հայ Առաքելական Եկեղեցին պետք է տոնի հայոց Մայր Տաճարի՝ Ս. Էջմիածնի տոնը, երբ մենք ոգեկոչում ենք քրիստոնեությունը Հայաստանում 301 թ. պետական կրոն հռչակման հիշատակները: Մեզ համար ուրախալի է հիշել, որ երբ տոնախմբում էինք մեր ժողովրդի և մարդկության պատմության այս նշանակալի իրադարձության 1700-ամյա հոբելյանը, ավելի քան 35 քույր Եկեղեցիների և կրոնական կազմակերպությունների առաջնորդներ այցելեցին Ս. Էջմիածին և մասնակցեցին հոբելյանական տոնակատարություններին: Արդարև՝ «Այդպես և մենք, թվով շատ, մի մարմին ենք Քրիստոսով, բայց յուրաքանչյուրս միմյանց անդամ ենք»:*

*Փորձություններով լեցուն իր պատմության ողջ ընթացքում Հայ Եկեղեցին ապրել է այս ըմբռնումով ու այս հավատով: Այսօր Հայ Եկեղեցին վերազարթոնքի հուսառատ օրեր է ապրում՝ ջանալով վերականգնել եկեղեցական կյանքում ժամանակի գործած ավերները: Հարյուրամյակներ շարունակ Հայաստանը բազմիցս ասպատակվել ու ավերվել է, և հայ ժողովուրդը կրել է օտար տիրապետությունների ամենածանր բռնությունը, երբ ամեն հալածանքի հետ պարտադրվում էր նաև հավատափոխությունը:*

*Հավատի բազում մարտեր է մղել մեր ժողովուրդը, նահատակվել, բայց չի ուրացել Քրիստոսին: Ամենամեծ ողբերգությունը, որ ապրեց մեր ժողովուրդը 20-րդ դարասկզբին, Օսմանյան Թուրքիայում կազմակերպված Հայկական ցեղասպանությունն էր, երբ Արևմտյան Հայաստանը դատարկվեց հայ բնակչությունից, քանդվեցին եկեղեցիները, նահատակվեցին հարյուրավոր եկեղեցականներ: Նույն ժամանակ Արևելյան Հայաստանում խորհրդային իշխանության հաստատմանը հետևեցին Եկեղեցու հանդեպ հալածանքներն ու հետապնդումները, հոգևորականների աքսորն ու սպանությունները: Սակայն Հայ Եկեղեցին շարունակեց իր առաքելությունը, և քարոզվող անաստվածության պայմաններում հույսն ու հավատը չլքեց մեր ժողովրդին: 20-րդ դարի ավարտը նույնպես դժվարին եղավ մեր ժողովրդի և Եկեղեցու համար: Մենք անցանք 1988 թ. ողբերգական, ավերիչ երկրաշարժի, Լեռնային Ղարաբաղի ազատագրական պայքարի, շրջափակման*

*բովով, որոնք ծանր անդրադարձան Հայաստանի նորանկախ Հանրապետության կյանքում: Ու Աստված ունեցած իր անսասան հավատքի շնորհիվ մեր ժողովուրդը կարողացավ հաղթահարել բոլոր այս աղետներն ու դժվարությունները և այսօր ավելի ու ավելի համախմբվելով իր Եկեղեցու հովանու ներքո, նորոգում ու զորացնում է հոգևոր կյանքը: Մեր ժողովուրդը հավատում է, որ աստվածճանաչողության ճանապարհն է մարդկության ապագան:*

*Աշխարհն այսօր կքած է բազմաթիվ խնդիրների և մարտահրավերների ծանրությունից, որոնց մեջ` աղքատությունը, անարդարությունը, պատերազմներն ու ահաբեկչությունը: Եկեղեցիները և կրոնական կազմակերպությունները կարևոր դեր ունեն այդ հրամայականներին ու փորձություններին բարոյական և արդարացի լուծումներ գտնելու հարցում: Մարդկությունը առավել վստահ քայլերով կընթանա դեպի իր խաղաղ, անվրդով և բարեկեցիկ կյանքը, երբ մենք դիտենք մեզ Ս. Պողոս առաքյալի` մեր մեկ մարմին լինելու խոսքերի տեսանկյունից: Երբ, լինելով մարմնի մեկ անդամը, մենք զգում ենք ուրիշների ցավը, ինչպես մեր սեփականը, և նույն կերպ զգում ենք միմյանց ուրախությունը: Յուրաքանչյուրս միմյանց անդամ` մեկի ուժը նաև մյուսինն է և բոլորինը:*

*Հայ Եկեղեցին միշտ ցանկացել ու ձգտել է եղբայրական հարաբերություններ պահպանել բոլոր Եկեղեցիների հետ: Այսօր Մենք կրկնում ենք Եկեղեցու Հայրերից Օգոստինոս Երանելու խոսքը, որը 11-րդ դարում Հայ Եկեղեցու դիրքորոշում իբրև հաստատել է Հայոց Կաթողիկոս Ս. Ներսես Շնորհալին` արտահայտելով էկումենիզմի ոգու նկատմամբ ունեցած մեր ավանդական մոտեցումը, և որով շարունակում է առաջնորդվել Հայ Եկեղեցին. «Միութիւն ի կարևորս, ազատութիւն յերկբայականս, սէր յամենայնի»:*

*Այս մտածումներով և զգացումներով Մեր ջերմեռանդ աղոթքն ենք վերառաքում առ Բարձրյալն Աստված` խնդրելով, որ Տերը օծի մեզ Իր Սիրո Շնորհով և զորացնի Ճշմարտության Իր Հոգով: Եկեք բոլորս միավորվենք` երկրպագելու Տիրոջը և գոհություն մատուցենք Նրան Իր բազում պարգևների, անսահման ողորմության ու խնամքի համար:*

*Թող Ամենաբարին Աստված օրհնի Ֆինլանդիայի Հանրապետությունը և այս հիանալի և հյուրընկալ երկրի բարեսիրտ ժողովրդին` շնորհելով հարատև խաղաղություն և բարգավաճում: Թող Ամենաբարձրյալն Աստված օրհնի, պահի և պահպանի մեզ բոլորիս, Ամեն:*

Այնուհետև Ամենայն Հայոց Հայրապետը հանդիպում ունեցավ Ֆինլանդիայի հայ համայնքի հետ: Նորին Սրբության օրհնությունը ստանալու համար Ֆինլանդիայի մայրաքաղաք էին եկել նաև Ստոկհոլմում, Տալլինում և Ս. Պետերբուրգում ապրող բազմաթիվ հայորդիներ:

Հունիսի 5-ի առավոտյան կազմակերպվեց մի փոքրիկ ճանապարհորդություն նավով: Տուրկու վերադարձի ճանապարհին Նորին Սրբությունը և պատվիրակության անդամները,



ՀՈՒՇԱՆՎԵՐՆԵՐ ԵՆ ՓՈԽԱՆԱԿՈՒՄ ԳԱՐԵԳԻՆ Բ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ
ԵՎ ՖԻՆԼԱՆԴԻԱՅԻ ՈՒ ՏՈՒՐԿՈՒԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՅՈՒԿԿԱ ՊԱԱՐՄԱՆ

Академия наук Армянской ССР
Фундаментальная библиотека



ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՖԻՆԼԱՆԴԻԱՅԻ ԻՐ ՓՈՔՐ ՀՈՏԻ՝ ՏԵՂԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՏ

Արքեպիսկոպոս Լեոյի ուղեկցությամբ, այցելեցին Պոկրովա եկեղեցի և Կիրկոնումմի Ուղղափառ Կենտրոն:

Երեկոյան ժամը 17.30-ին Ֆինլանդիայում Ռուսաստանի Դաշնության գլխավոր հյուպատոս պարոն Վադիմ Ռոզանովի հրավերով Վեհափառ Հայրապետի գլխավորած պատվիրակության անդամներն այցելեցին հյուպատոսարանի փարածքում գտնվող մատուռ: Տուրկուում Ռուսաստանի Հյուպատոսարանի փարածքում Ռուս Ուղղափառ Եկեղեցու հիմնադրման և գործունեության մասին պատմեց Ֆինլանդիայում Մոսկվայի Պատրիարքության ներկայացուցիչ Հայր Վիկտոր Լյուտիկը և ծխական քահանան՝ Հայր Նիկիտա Դոբրոնրավովը:

Ի պատիվ Վեհափառ Հայրապետի ընդունելություն էր կազմակերպվել գլխավոր հյուպատոս պարոն Վ. Ռոզանովի կողմից: Ընդունելությանը ներկա էին նաև Ֆինլանդիայի Ավետարանական-Լութերական Եկեղեցու պատվիրակությունը՝ Արքեպիսկոպոս Յուկկա Պաարմայի գլխավորությամբ, և Հելսինկիի Մետրոպոլիտ Ամբրոսիոսը:

Այցի ավարտին Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը գրառումներ կատարեց հյուպատոսարանի՝ պատվավոր հյուրերի համար նախատեսված մատյանում:

Երեկոյան ժամը 19.00-ին Վեհափառ Հայրապետի գլխավորած պատվիրակության անդամները միջնադարյան Նաանտալի վանքում մասնակցեցին այստեղ կազմակերպված երգի ավանդական փառատոնի բացման արարողությանը:

Հունիսի 6-ի առավոտյան Նորին Սրբությունը և հայրապետական շքախմբի անդամները Տուրկուի Տաճարում մասնակցեցին Ս. Պատարագի: Ֆինլանդիայի և Տուրկուի Արքեպիսկոպոս Յուկկա Պաարման ողջունեց Վեհափառ Հայրապետին՝ ի մասնավորի անդրադառնալով հայ և ֆինն ժողովուրդների և Եկեղեցիների բարեկամական հարաբերություններին և դրանց հետագա զարգացմանը, այնուհետև հրավիրեց Վեհափառ Հայրապետին իր ողջույնի խոսքը ուղղելու ներկաներին:

## Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՏՈՒՐԿՈՒԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

*«Ձեզ կարգեցի, որ դուք գնաք և պտղաբեր լինեք, և ձեր պտուղը մնա...:*
*Այս եմ ձեզ պատվիրում, որ սիրեք միմյանց»:*
(Հովհ. ԺԵ 16-17):

*Մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի այս խոսքերը բովանդակում են Հոգեգալստյան շնորհաշնորհ օրերի խորհուրդը, որով այս օրերին ապրում են քրիստոնեական Եկեղեցիները: Սուրբ Հոգու էջքով առաքյալների վրա և երկրից երկիր նրանց քարոզությամբ սկզբնավորվեց Քրիստոսի Սուրբ Եկեղեցին, աճեց ու զորացավ սիրո մեջ և միշտ պտղաբեր եղավ, երբ չպակասեց սերը Եկեղեցուց ներս:*

*Այսօր փառք և գոհություն ենք վերառաքում առ Տերը, որ առիթն ընձայեց Մեզ հրավերով Ֆինլանդիայի Ավետարանական Եկեղեցու հոգևոր Առաջնորդ Ար-*

քերս. Ջուլիա Պապարմայի, այցելելու ձեր գեղեցիկ երկիրը՝ իբրև մի նոր վկայութ-յուն մեր Եկեղեցիների միջև սիրո և եղբայրական հարաբերությունների: Հանուն հավատացյալ հայ ժողովրդի ի Քրիստոս սիրով ողջունում ենք այս սուրբ դաշնա-րում միասնական աղոթքի հավաքված մեր եղբայրներին ու քույրերին՝ քույր Ե-կեղեցիների ներկայացուցիչներին, Ֆիլիպինյան պետական պաշտոնյաներին, այստեղ ապրող մեր Եկեղեցու զավակներին:

Մեր հոգում տպավորիչ թարմ են թեմական առաջնորդ եղած ժամանակ Ֆիլի-պինյան Մեր մասնավոր այցելության քաղցր հիշատակները: Հյուսիսային բացա-ռիկ գեղեցկությամբ, համապարած անտառներով, կղզիներով ու լճերով հա-րուստ ձեր երկրի ժողովուրդը մեզ ծանոթ է մարդկային վսեմ արժեքների հան-դեպ տածած խորին հարգանքով, ազատ ու արժանապատիվ կյանք ունենալու իր հարատև ձգտումով, իրավունքի և արդարության վրա հիմնված հասարակու-թյուն ձևավորելու իր վճռականությամբ:

Մենք գալիս ենք բիբլիական Արարատի փեշերին տարածված Հայաստանի Հանրապետությունից, որ նոր կյանք է կառուցում՝ վերականգնյալ պետականութ-յամբ: Գալիս ենք Հայ Առաքելական Եկեղեցու ամենանվիրական սրբավայրից՝ Սուրբ Էջմիածնից, որը 17 դար առաջ կառուցվել է այն տեղում, ուր հավատի մեր հոր՝ Սուրբ Գրիգոր Լուսավորչի տեսիլքի համաձայն լուսեղեն հրաշալի կերպա-րանքով իջավ Հարուցյալ Քրիստոս, այցի գալով Իր անունով մկրտության պատ-րաստվող հայ ժողովրդին: Սուրբ Էջմիածնից հեռու չէ այն վայրը, ուր Նոյը դուրս գալով տապանից, կառուցել էր առաջին զոհասեղանը և հավատարմության նոր ուխտ հաստատել Աստծո հետ: Նախախնամաբար այս նույն տեղում էր այն խո-րին գուբը, ուր մարդկանցից լքված, միայն Աստծո հետ 13 տարի ապրեց Սուրբ Գրիգորը և դուրս գալով, Ավետարանի լույսը տարածեց համայն հայոց աշխար-հում: Այս հիշատակներով մեր ժողովուրդը Սուրբ Էջմիածնի խորհրդի մեջ տես-նում է Աստծո ներկայությունը իր կյանքում, նորոգում իր հավատն ու ուխտը առ Փրկիչ Տերը մեր:

Այսօր նույն այդ սրբավայրի՝ Սուրբ Էջմիածնի անմահ խորհրդով, հզոր ներշնչանքով ու օրհնությամբ է, որ ջանում ենք պայծառացնել ու շենացնել Հայ Ե-կեղեցու առաքելությունը վերածնվող Հայաստանի ազատ իրականության մեջ: Հոգևոր զարթոնքի պայմաններում ընդլայնվող գործունեությամբ ու իրականաց-վող ծրագրերով մեր Եկեղեցին պիտի վերականգնի իր առօրյա ներկայությունը համայն մեր ժողովրդի կյանքում՝ իբրև հոգևոր կենդանության ու զորության ա-կունք, լույս և հույս, որոնցից հեռու մնաց 20-րդ դարասկզբին Արևմտյան Հայաս-տանում Հայոց ցեղասպանության, իսկ Արևելյան Հայաստանում՝ խորհրդային իշ-խանության բերած հոգևոր սովի արդյունքում:

Մեր Եկեղեցու առաքելության ճանապարհին մեծապես կարևորում ենք նաև է-կումենիկ ոգով սերտ հարաբերությունները քույր Եկեղեցիների հետ: Աստծո Կամքն ու պատգամն է մեզ. «Չեզ կարգեցի, որ դուք գնաք և պտղաբեր լինեք, և



ԳԱՐԵԳԻՆ Բ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԵՎ ԿԱՐԵԼԻԱՅԻ ՈՒ
ՀԱՄԱՅՆ ՖԻՆԼԱՆԴԻԱՅԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԼԵՈՆ ՊՈԿՐՈՎԻ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Академия наук Армянской ССР
Фундаментальная библиотека



ԿԻՐԿՈՆՈՒՄՄԻ ՈՒՂՂԱՓԱՌ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ

*ձեր պտուղը մնա...: Այս եմ ձեզ պատվիրում, որ սիրեք միմյանց» (Հովհ. ԺԵ 16-17):*

*Սիրո և փոխգործակցության պատրաստակամությունն է էկումենիզմի ճշմարիտ ոգին, որով զորանում է Քրիստոսի Եկեղեցու հավաքական ուժը և բարոյական հեղինակությունը, որով ավելի զորավոր ու պտղաբեր պիտի լինի նաև քրիստոնեական Եկեղեցիների մեկ առաքելությունը: Մեր՝ Ֆինլանդիայի Ավետարանական և Հայ Առաքելական Եկեղեցիները վերջին ժամանակներում են արձանագրել իրենց բարեկամական հարաբերությունները, որոնց ջերմության վկայությունն էր Գերաշնորհ Ջուկկա Պաարմայի այցելությունը Սուրբ Էջմիածին: Մենք հավատում ենք, որ քրիստոնեական Եկեղեցիների սերտացող հարաբերությունները նոր հեռանկար ու հնարավորություններ են բացելու միասնաբար գործելու՝ հանուն ամենուր խաղաղության հաստատման, հանուն ավելի մի լավ աշխարհի կառուցման: Այո, Մենք հավատում ենք, որ մեր Փրկչի խոստումը, թե Ինքը մեզ հետ է մինչև ի կատարածն աշխարհի, պիտի զգանք ավելի ամբողջական ու ավելի կատարյալ՝ երբ մի ենք: Իրոք, մի ենք մեզ սրբեղծող ու նախախնամող մեկ Հայր Աստծով, մեր փրկության համար մարդացած, խաչված ու Հարություն առած մեկ Փրկիչ Հիսուս Քրիստոսով և մեր բոլոր մարտահրավերների ու դժվարությունների մեջ մեզ մխիթարող, ապաքինող ու առաջնորդող մեկ Սուրբ Հոգիով:*

*Այս հավատով է, որ այցի ենք եկել ձեզ, բերելով Մեր և հավատացյալ մեր ժողովրդի աղոթքները, մեր հազարամյա սրբավայրերի օրհնությունը Ֆինլանդիայի հողին ու ժողովրդին: Հայցում ենք առ Աստված, որ բարգավաճ ու բարօր պահպանի ձեզ, Իր շնորհի ներքո՝ Ֆինլանդիայի Ավետարանական Եկեղեցու հոգևոր դասը, նրա բարեջան առաջնորդներին և Ֆինլանդիայի և Տուրկուի Արքեպիսկոպոս Ջուկկա Պաարմային՝ պարգևելով արևշատ կյանքի երկար օրեր ու բազում բարի իրագործումներ:*

*Օգտվելով Մեր այս այցի ընձեռած հնարավորությունից, Հայրապետական գնահատանքի ու շնորհակալության Մեր խոսքն ենք ուղղում Ֆինլանդիայի իշխանություններին ու աստվածասեր ժողովրդին, որ բաց պահեցին իրենց սրտերը ու դռները մեր ժողովրդի բազմաթիվ զավակների առջև՝ օթևան տալով նրանց: Լիահույս ենք, որ մեր ժամանակում նրանք կունենան իրենց հոգևոր հովիվը և աղոթատունը ու համախմբված Հայ Եկեղեցիով, իրենց ազնիվ ծառայությունն ու վաստակը կբերեն Ֆինլանդիայի հասարակական կյանքին:*

*Այս հոգենորոգ օրը աղոթենք միասին, որ Երկնավոր Տերը ամրապնդի ու զորացնի ի Քրիստոս սիրո ու եղբայրության մեր ոգին, շնորհ և օրհնություն բաշխի հավատավոր Իր հոտին՝ ի պայծառություն Ընդհանրական, Առաքելական, Սուրբ Եկեղեցու՝ այժմ և հավիտյանս. ամեն:*

Արքեպիսկոպոս Ցուկկա Պաարմայի, ինչպես նաև Ֆինլանդիայի Ուղղափառ Եկեղեցու պետ արքեպիսկոպոս Լեոյի հետ հանդիպումների ընթացքում հավաստվեցին միջեկեղեցա-

կան կապերի կարևորությունը: Վեհափառ Հայրապետը հույս հայտնեց, որ համագործակցությունը կշարունակվի ոչ միայն հոգևոր պետերի, այլև եկեղեցապատկան հաստատությունների միջև:

Այցի ավարտին Ֆինլանդիայի և Տուրկուի Արքեպիսկոպոս Յուկկա Պաարմայի նստավայրում երկու Եկեղեցիների պետերը նվերներ փոխանակեցին և համատեղ աղոթք բարձրացրեցին խաղաղության, ժողովուրդների բարեկամության, երկու երկրների համագործակցության, առաջընթացի և բարեկեցիկ կյանքի համար:

Հունիսի 7-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ավարտելով պաշտոնական այցը Ֆինլանդիա, վերադարձավ Մայր Աթոռ Ս. Էջմիածին:

ԳԱՅԱՆԵ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
*Միջեկեղեցական հարաբերությունների բաժին*